

ՓՈՒՍԱՌՈՒՓՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Ք. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Լեզվի բառային կազմի համալրման և հարստացման աղբյուրները նրա ներքին հնարավորություններն ու արտաքին միջոցներն են: Բառապաշարի լրացման հիմնական աղբյուրը բոլոր զարգացող լեզուներում էլ մնում է լեզվի ներքին հնարավորությունները՝ տվյալ լեզվի բառակազմական գործող կաղապարներով նոր բառերի ստեղծումը, լեզվում գործածվող բառերի իմաստաբանական համակարգում կատարվող փոփոխությունների՝ բառային իմաստների հարստացման շնորհիվ նոր իմաստների ձևաբանումը կամ իմաստների մասնավորումը:

Փոխառությունը նույնպես իբրև լեզվի բառային կազմի լրացման և հարստացման կարևոր և հաճախ անհրաժեշտ աղբյուր, այնուամենայնիվ, եղել և մնում է որպես բառապաշարի համալրման և հարստացման օժանդակ միջոց: Ինչպես որ ժողովուրդները համաշխարհային կյանքում, նրա տնտեսական և քաղաքական ընդհանուր համակարգում շին կարող մեկուսացած կյանք վարել, այնպես էլ բացառվում է լեզուների բացարձակ մեկուսացածությունը և ինքնամոփոխությունը:

Փոխառությունները ժողովուրդների տնտեսական, քաղաքական, մշակութային կապերի և փոխազդեցությունների բնական արդյունքն են: Բառային փոխառությունների դեպքում տարբեր լեզուների շփման ու հաղորդակցման հետևանքով նոր և անծանոթ հասկացությունների, իրերի, առարկաների հետ տվյալ լեզվի բառապաշարը մուտք են գործում նաև այդ հասկացությունները, առարկաներն ու երևույթները նշանակող բառերը:

Փոխառություններն իրենց կարևորությամբ ու անհրաժեշտությամբ հանդերձ՝ բառապաշարի լրացման իբրև օժանդակ աղբյուր, նպաստում են լեզվի բնականոն զարգացմանը, բառային կազմի հարստացմանն ու ճոխացմանը¹:

Բառային փոխառություններն ունեն արտաքին և ներքին, արտալեզվաբանական և լեզվաբանական պատճառներ²:

Փոխառության արտաքին պատճառները կապված են ժողովուրդների միջև ժամալվող քաղաքական, տնտեսական, մշակութային և նման կապերի հետ: Արտալեզվաբանական գործոնները պայմանավորված են նաև գիտության, տեխնիկայի և արտադրության բնագավառներում ժողովուրդների փոխներգործությամբ և փոխազդեցությամբ:

Փոխառության ներքին պատճառները մասամբ պայմանավորված են և բխում են արտաքին՝ արտալեզվաբանական պատճառներից: Այս դեպքում արտաքին գործոնների շնորհիվ օտար լեզվից փոխառվող բառերը իրենցից ներկայացնում են տվյալ լեզվին դեռևս անծանոթ հասկացության լեզվական համապատասխանություններ: Մեր դարաշրջանում նոր հասկացությունների փոխառության ակնհայտ օրինակներ են ռուսերենում ձևավորված և բազմաթիվ լեզուներում տարածված՝ совет (սովետ), колхоз (կոլխոզ), совхоз (սովխոզ) և նման բառերը:

Փոխառության ներքին պատճառները բխում են լեզվի բառապաշարային և իմաստաբանական համակարգերի զարգացման ու կենսագործունեության պահանջներից:

Փոխառության ներքին հիմնական պատճառը, իհարկե, տվյալ հասկացությանը կամ գաղափարին, առարկային, երևույթին համապատասխանող բառի բացակայությունն է փոխառու լեզվում: Եթե լեզուն ի վիճակի է բացակայող այդ հասկացության համար իր սեփական հնարավորություններով՝ բառակազմական միջոցներով, բառակազմության գործող կաղապարներով նոր հաջող բառ կերտելու կամ առաջարկելու, այդ դեպքում փոխ է առնվում միայն տվյալ հասկա-

¹ P. A. Будагов, Введение в науку о языке, М., 1958, с. 108, 110.

² А. А. Реформатский. Введение в языкознание, М., 1955, с. 115.

ցությունը՝ իրի, առարկայի կամ երևույթի գաղափարը: Մյուս դեպքում, արդեն այդ հասկացության հետ լեզուն փոխ է առնում նաև օտար բառը:

Փոխառություն կարող է կատարվել նաև հետևյալ նպատակներով³.

ա) Բառագործածության կարգավորման և նորմավորման նպատակով փոխառյալ բառերի հաշվին ավելի մասնավորել բնիկ, սեփական բառերի գործածության ոլորտները, օր.՝ *ուսերենում* экспорт, импорт և торговля. հայերենում՝ կոմպոզիտոր և երգահան, կոնցերտ (երաժշտական երկի տեսակ) և համերգ (ընդհանուր), կվարտետ (երաժշտական երկ) և Բաղյակ (կատարողներ), տրիո (երաժշտական երկ) և եռյակ (կատարողներ) և այլն:

բ) Փոխառյալ բառերի օգնությամբ ճշգրտել որոշ հասկացություններ, որոնք մայրենի լեզվի բառերում դեռևս չեն մասնավորվել. օր.՝ *ուսերեն* варенье հնում նշանակում էր հատապտուղներից եփված և՛ շրալի, և՛ պինդ տեսակները, այժմ գործածվում է շրալի տեսակի համար, իսկ պինդ տեսակը՝ джем հայերենում՝ մուրաբա և ջեմ. репортаж բառը ճշտում է ուսերենն *рассказ* բառի հոմանիշային իմաստը, комфорт (հարմարություն) բառի համար сервис և обслуживание:

գ) Փոխառյալ բառերի շնորհիվ հաճախ փոխարինվում են այն անվանումները, որոնք նախկինում արտահայտվել են բառակապակցություններով. օր.՝ *ուսերենում* снайпер—меткий стрелок, мотель — гостиница для автотуристов, спринтер — бегун на короткие дистанции, стайер — бегун на длинные дистанции.

Փոխառություն կատարվում է նաև, երբ բառը միջազգային տերմին է:

Մասնագիտական գրականության մեջ միջազգային են համարվում այն բառերն ու տերմինները, որոնք հաճախակի գործածվում են ժամանակակից մի շարք լեզուներում և իրենց հիմնական իմաստներով ու ճնշումական կազմով նույնն են կամ համարյա նույնն են այդ լեզուներում: Միջազգային համարվող բառերի հիմնական զանգված են կազմում, այսպես կոչված «զուտ լեզվական» փոխառությունները: Ի տարբերություն մշակութա-պատմական փոխառությունների, վերջինս կապ չունի հասկացությունների՝ առարկաների և երևույթների փոխառության հետ: Այս դեպքում ժամանակակից զարգացած մի շարք լեզուներում՝ ուսերենում, անգլերենում, ֆրանսերենում և այլն, նոր առաջացող հասկացությունների՝ առարկաների և երևույթների համար հունական և լատինական բառարմատներից (կամ հաճախ այդ լեզուների տերմինատարների հիման վրա) նշված լեզուների բառակազմական գործող կաղապարներով կազմվում են նոր բառեր ու տերմիններ, որոնք այնուհետև փոխանցվում են աշխարհի մյուս լեզուներին: Այդ եղանակով են կազմվել ժամանակակից բազմաթիվ լեզուներում գործածված (այդ թվում նաև հայերենում) այնպիսի հանրահայտ բառեր, ինչպես՝ սոցիալիզմ (ֆրանս. socialisme <լատ. socialis—«հասարակական»), կոմունիզմ (ֆրանս. communisme <լատ. communis—«ընդհանուր»), ինտերնացիոնալիզմ (լատ. inter—«միջև», natio (nationalis)—«ժողովուրդ»), ավտոմոբիլ (հուն. aulos—«ինքն»+լատ. mobilis—«շարժական»), ավիացիա (ֆրանս. aviation <լատ. avis—«թռչուն»), պլանիզմ (հուն. plan—«բռնողը, ամրոջը»+teos—«աստված»):

Ռուսերենում և մի շարք եվրոպական լեզուներում գործածվող՝ ռուս. телефон, телеграф բառերը կազմված են՝ հուն. tele «հեռու»+phone «ձայն», tele+հուն. grapho—«գրում եմ» բաղադրիչներից: Նշված կարգի բազմաթիվ բառերի ու տերմինների համապատասխան հասկացությունները անհամեմատ ավելի նոր են նրանց հիմքում ընկած լատինական կամ հունական բառարմատներից:

Ի. Բուդաղովի տվյալներով ուսերենն интеллигенция բառը թեև ծագում է լատիներեն intelligens, intelligentis արմատից, բայց ձևավորվել և «մտավորականություն» իմաստն ստացել է ուսերենում և մինչև վերջերս այդ իմաստով հայտնի չէր եվրոպական լեզուներին:

Օտարազգի բառերի փոխառությանը կարող է նպաստել կամ նախապատվությունը օտար բառին կարող է տրվել ներքին այլ պատճառներով:

ա) Այս կամ այն թերի հասկացության համար լեզվի բառակազմական կաղապարներով և լեզվում առկա բառային նյութով (սեփական արմատներով, ածանցներով և այլն) կազմված բառերի անբարենչյունությունը, հատկապես երկարությունը. օրինակ՝ տուրիզմ և զբոսաշրջապայուրյուն կամ զբոսաշրջիկություն. կասնոպոլիտիզմ և աշխարհաբաղադրյուն կամ համաշխարհաբաղադրյուն:

բ) Օտարազգի բառի համար լեզվում կերտված նորակազմ բառի իմաստային որոշ անհամապատասխանությունը, որ կարող է առաջ բերել տվյալ հասկացության համապատասխանող

³ Р. Н. Попов и др. Современный русский язык, М., 1978, с. 88—90.

⁴ А. А. Реформатский, *Նշվ. աշխատ.*, էջ 115, Р. А. Будагов, *Նշվ. աշխատ.*, էջ 108—110, 114, 115:

բառի ընդունված իմաստի անգամ մասնակի խեղաթյուրում՝ հատկապես հասարակական-քաղաքական և գիտա-տեխնիկական տերմիններում. օրինակ, հայերենում համայնավար և կոմունիստ, համայնավարություն և կոմունիզմ, ընկերավարություն և սոցիալիզմ, բնաշրջում, բարեշրջություն, շրջափոխություն և էվոլյուցիա, սեռեսություն և էկոնոմիկա և այլն:

գ) Նախապատվությունը փոխառյալ բառին է տրվում նաև օտարազգի նույն հասկացության համար լեզվում մեկից ավելի (մի քանի) նորակազմ բառերի առկայության դեպքում: Այս դեպքում էլ նույն հասկացություն արտահայտող օտար բառի հետ մի քանի սեփական բառերի առկայությունը և առատությունը կարող են պատճառ դառնալ փոխառյալ բառի ընտրության, ինչպես, օրինակ՝ երգանան, երգաստեղծ, եկագանարդար, եկագաստեղծ, երաժշտանագրար, երաժշտաստեղծ և փոխառյալ՝ կոմպոզիտոր, կամ՝ մրգաբան, մրգանույ, շամչարակ, խոշար և կոմպոս:

դ) Հատկապես լեզվի տերմինաբանական բառապաշարի մեջ մտնող տերմինի բազմիմաստությունից խուսափելու և հաճախ բազմիմաստության վերացման նպատակով նպատակահարմար է լինում տվյալ հասկացության համապատասխան տերմինի փոխառությունը, ինչպես օրինակ՝ կոմպոզիտոր և 1) (տեխ.) ճնշակ. 2) (թժշկ.) սեղմակ, սեղմիչ և այլն:

Փոխառություն երբեմն կատարվում է նաև պարզապես իբրև «ձևամուտություն»⁵, երբ որոշակի հակում է գրեթե տրվում դեպի օտար բառը: Այդ կարգի փոխառություններն անհամեմատ ավելի սակավաթիվ են և հատուկ են հիմնականում ժողովրդա-խոսակցական լեզվին, հատկապես, այսպես կոչված, ժարգոնային փոխառություններին:

Փոխառություններ կատարվում են ոչ միայն լեզվում այս կամ հասկացության բացակայության, այլև առկայության պայմաններում:

Լեզվում տվյալ հասկացության համապատասխան սեփական բառերին զուգընթաց նոր բառերի փոխառությամբ (անկախ նրա ներքին և արտաքին պատճառներից) նույնպես համալրվում է լեզվի բառային կազմը: Այդ կարգի բառերի շնորհիվ հաճախ հարստանում են տվյալ լեզվի հոմանշային կապերը, լեզուն ճոխանում է հոմանիշներով ընդհանրապես:

Այսպիսով, այն դեպքերում, երբ փոխառյալ բառը չի արտահայտում նոր հասկացություն, այսինքն՝ այնպիսի նոր առարկա, երևույթ և այլն, որոնք անծանոթ են փոխառնող լեզվին, տվյալ լեզվում արդեն գոյություն ունեցող հասկացությունների և նրանց համապատասխան բառերի և իմաստների տարբերակման պահանջով լեզվում արդեն առկա սեփական ՝ փոխառյալ նոր բառերի միջև հաստատվում են հոմանշային հարաբերություններ՝ հաճախ ստեղծելով իմաստային նրբերանգային կամ ոճական-կիրառական տարբերություններ: Այսպես՝ տվյալ հասկացության համապատասխան բառերի իմաստային-նրբերանգային կամ ոճական-կիրառական տարբերակման նպատակով՝ բնիկ (հնդեվրոպական) դրացի բառին զուգընթաց հայերենը պարսկերենից փոխ է առել հարեան կամ՝ բնիկ յուղ-ի դիմաց ասորական ձեթ բառը: Նման օրինակների կարելի է բերել հայոց լեզվի պատմության բոլոր շրջաններից: Լեզվի զարգացման նոր շրջանում օտարազգի մատերիալիստ և մատերիալիզմ բառերի համար ժամանակին կազմվել են նյութապաշար և նյութապաշարություն բառերը, որոնք այժմ ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակում սահմանափակ կիրառվում են միայն ոչ փիլիսոփայական-տերմինաբանական իմաստներով: Ժամանակակից գրական հայերենում ոճական-կիրառական տարբերություններով են օժտված, բնիկ՝ սաինճ և կովկասյան լեզուներից փոխառյալ՝ ծիծ, բնիկ՝ մարտ և իրանյան՝ պատերազմ, բնիկ՝ ամաճուր, նուր տարի և լատինական փոխառություն՝ կաղաճը, կամ բնիկ՝ հազմ, հով և փոխառյալ՝ սյուլ (ասորական), զեփյուտ (հունական) բառերը:

Նոր փոխառություններն ավելի շատ վերաբերում են.

ա) Մասնագիտական բառապաշարին, հասարակական-քաղաքական և գիտատեխնիկական տերմինաբանությանը:

Արդի պայմաններում ժողովուրդների և նրանց լեզուների մշտական շփումը, լեզուների փոխազդեցությունը, մյուս կողմից, գիտատեխնիկական հեղաշրջումը, նորանոր հասկացությունների առաջացումը, օրավուր աճող և վիթխարի շփերի հասնող գիտատեխնիկական ինֆորմացիան իբրև արտալեզվաբանական հզոր գործոն՝ որոշակիորեն ազդում է ժամանակակից զարգացած լեզուների բառապաշարների հարստացման վրա և նպաստում բառային փոխառությունների տարածմանը: Այդ կարգի բառ-տերմինները լայն տարածում գտնելով մի շարք լեզուներում, իրենց բնույթով դարձել են արդեն միջազգային բառեր և մասնագիտական գրականության մեջ տարբերակվելով՝ առանձնացվում են, այսպես կոչված, «միջազգային բառապաշարի» մեջ:

⁵ P. A. Будагов, նշվ. աշխատ., էջ 108:

⁶ Հմմտ. Ա. Սուփապյան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1982, էջ 239:

բ) Փոխառություններ վերաբերում են նաև՝ կենցաղի, տնային գործածության առարկաներին՝ հագուստեղենի, կոշիկեղենի, զանազան արտադրական և գյուղատնտեսական գործիքների, սննդամթերքի, ուտելիքների, ճաշատեսակների և այլն անվանումներին:

գ) Սովորաբար փոխ են առնվում այնպիսի հասկացություններ, որոնք վերաբերում են պատմական և տեղական բնույթի բառերին, այսպես կոչված տեղայնաբանություններին: Այդ կարգի բառերի շարքն են դասվում. 1) տեղական և պատմական բնույթի այնպիսի բառեր, ինչպես, օրինակ՝ ուսական իրականության մեջ՝ դուժա, սիճոզ, զլավա, ցար, ցարիզմ, ուրյադնիկ և այլն:

2) Տարբեր ժողովուրդների մոտ տարածված երաժշտական գործիքների, երաժշտական երկերի, երաժիշտների անվանումներ, ինչպես՝ բալալայկա, բայան, բանդուրա, զուպի, զուլուկ, զուճեճ, էյամանչա, կորգա, կորգար, ակին, աչաղ, զուսան, կարմանեյալ, կանցոճա, կապրի-չիո, կավափեճա, կրակոլյակ, մազուրկա, մադրիզալ, մարսեյազ, պոլկա և այլն:

3) Տարբեր երկրների դրամական միավորների անուններ, ինչպես՝ դրաբ, ֆրանկ, մարկ, դիճար, կրոն, ֆունտ, իեն, պեսո և այլն:

Փոխ են առնվում ոչ միայն լեզվի համագործածական բառերը, այլև ընդհանուր գործածական բառապաշարի սահմաններից դուրս գտնվող՝

ա) անվանակարգային զանազան հասկացություններին վերաբերող բազմաթիվ և բազմաբնույթ ապրանքների, արտադրատեսակների, կիսաֆաբրիկատների, արտադրանքի և այլն անվանումները. բ) տեղանունները, աշխարհագրական անունները՝ բնակավայրերի, երկրների, գետերի, լեռների, ծովերի և այլնի տարբեր անվանումները (օնոմաստիկա). գ) ժողովուրդների և մարդկանց հատուկ անունները (էթնոնիմիկա):

Անվանակարգային հասկացություններ նշանակող բառերի, տեղանունների և աշխարհագրական անունների, ինչպես նաև ժողովուրդների և մարդկանց տարբեր անունների փոխառությունը, ըստ երևույթի՛ն, պարասպորտի և անհրաժեշտ է բոլոր ժողովուրդների համար և խոսափել այդ կարգի բառերի փոխառությունից հնարավոր չէ: Որոշ դեպքերում, սակայն, նկատվում են այս կարգի անվանումների թարգմանություններ: Անհրաժեշտ է նշել, որ նման թարգմանությունները վերաբերում են բացառապես բաղադրյալ անուններին: Հայտնի են մի շարք բաղադրյալ (բառակապակցական) տեղանունների թարգմանության օրինակներ. ինչպես՝ Աև ծով, Մեծ կամ Խաղաղ օվկիանոս, Հյուսիսային սառույցյալ օվկիանոս, Հրո երկիր, Բարեճուս երվանդան և այլն:

Անհրաժեշտ է նշել նաև, որ բառապաշարի ոչ բոլոր բաժիններն են հավասար շահով լրացվում փոխառությունների շնորհիվ: Մասնագետները գտնում են, որ իբրև կանոն խիստ հազվադեպ է հիմնական բառաֆոնդի բառերի փոխառությունը: Հիմնական բառաֆոնդի հազվադեպ փոխառվող բառերը հատկապես վերաբերում են բառապաշարի հետևյալ շերտերին, գործածության բնագավառներին և բառերի քերականական հետևյալ խմբերին՝

ա) Ազգակցական տարբեր հարաբերություններ ցույց տվող բառեր, ինչպես՝ հայր, մայր, եղբայր, փայր, որդի, ամուսին, հարս, փեսա, քեռի, անեթ, զոճանչ, սկեսուր, սկեսրայր և այլն:

Սրան պետք է ավելացնել նաև, որ բանավոր խոսքում, հայերենի որոշ բարբառներում ներկատվում են այս կարգի որոշ բառերի փոխառության դեպքեր, օր.՝ աքա, բաքա, կյանե, բքատ և այլն:

բ) Մարմնի մասերի և մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ նյութերի անուններ, ինչպես, օրինակ՝ զլավա, աչք, ձեռք, քե, քիկունք, ոտք, մատ, ականջ, քիթ, երես, աթամ, բերան, զուճ, այտ, կակոդ, եզունգ, մեջք, ուս, կուճք, թոք, լյարդ, արյուն և այլն:

գ) Բնության երևույթների և առարկաների տարբեր անվանումներ, ինչպես՝ անձրև, ձյուն, կարկուտ, քամի, քուփ, մեղիկ, օդ, կայծակ, որոտ, սառ, լժո, գետ, ծով, անտառ, արև, աստղ, լուսին, ամպ, ջուր, հող և այլն:

դ) Որև, հատկանիշ ցույց տվող բառեր՝ որակական ածականներ, ինչպես՝ բարձր, ցածր, երկար, կարճ, բարակ, հաստ, խելոք, հիմար, ուրախ, տխուր, արագ, զանդաղ, շտապ և այլն:

ե) Հասակապես հաճախ գործածվող դերանունները, շաղկապները, կապերը, ձայնարկությունները, եղանակավորող բառերը, քանակական թվականներից՝ մեկից—ինեսուներեք, դասական թրվականները և այլն:

Փոխառնող լեզվում կատարվում է փոխառյալ բառերի յուրացում: Օտարազգի փոխառյալ բառերը յուրացվելիս՝ հարմարեցվում են նոր լեզվի հնչյունաբանությանը, գրաբանությանը, քերականությանը: Նոր լեզվում տեղի է ունենում այդ կարգի բառերի հնչյունական, քերականական և իմաստաբանական յուրացում՝ լեզվի նշված կարգերի կանոնների և օրինաչափությունների համաձայն: լեզվական այդ համակարգերին ենթարկելու շնորհիվ:

Հնչյունական յուրացման⁸ դեպքում տվյալ լեզվի համակարգին օտար, խորթ հնչյունները փոխարինվում են սեփականով, օր. ուսերենում և հագագի բացակայության պատճառով՝ այն փոխարինվում է չ կամ ր հնչյուններով. հուն. hidro, ուս. гидро, անգլ. hockey > ուս. хоккей, գերմ. Herzog > ուս. герцог, հուն. harmonia > ուս. гармония, լեհ. hetman > ուս. гетман:

Պարանական յուրացումը փոխառյալ բառերի գրութային արտահայտելն է տվյալ լեզվի այբուբենի տառերով: Այսպես՝ անգլ. a > ուս. е կամ ей օր.՝ labourites > лейборист, lady > леди, eu, au > ов, эв, օր.՝ эвкалипт (< հուն. eukalyptos), автомобиль (գերմ. Automobil) և այլն:

Ձևարանական (քերականական) յուրացման դեպքում օտար բառը ենթարկվում է տվյալ լեզվի քերականական կանոններին և օրինաչափություններին: Այս դեպքում օտար բառերից հեռացվում կամ տվյալ լեզվին են հարմարեցվում ածանցները, վերջավորությունները, քերականական տարրեր ձևերը, քերականական որոշակի կարգեր: Այսպես՝ ուսերենում փոխվում են օտար բառերի որոշ վերջավորություններ, հունարեն seminarium—семинарий և семинар, ֆրանսերեն l'affaire—афера, la visite—визит, décoration—декорация, լատիներեն degeneratio—дегенерация և այլն:

Քերականական սեռային կարգ ունեցող լեզուներում կատարվում են գոյականների սեռի փոփոխություններ, օր.՝ գերմաներեն das Halstuch (չեզոք սեռ), ուսերենում галстук (արական սեռ), die Schrift (իգական) և шрифт (արական), der Kegel (արական սեռ)—кегля (իգական սեռ) և այլն: Լատիներենում consilium, plenum, ultimum բառերում um-ը չեզոք սեռի ցուցիչն է, ուսերենում консилум, пленум, ультиматум—արական սեռին պատկանող գոյականներ են: Նկատվում են նաև բառերի խոսքիմասային պատկանելության փոփոխություններ: Ֆրանսերենում royal ածական է, ուս. рояль—գոյական. նույն ձևով. ֆր. fournil ածականը ուսերենում վեր է ածվել фанера գոյականի:

Հիմնականում օտար բառը փոխ է առնվում եզակի թվի ուղղական ձևով: Ռուսերենում կան գերմանական և անգլիական փոխառություններ, որոնք սկզբնաղբյուրում ունեցել են հոգնակի ձև. ինչպես, օրինակ՝ ուս. клапан < գերմ. Klappen (die Klappe), локон < գերմ. Locken (die Locke), рельс < անգլ. rails (եզ. rail) և այլն:

Փոխառության բառային յուրացման դեպքում բառի արտահայտած հակացությունը դառնում է տվյալ լեզվի սեփականությունը: Բառային յուրացումը փաստորեն բառի բառային իմաստի փոխանցում է նոր լեզվին, փոխառյալ բառի իմաստային հարմարեցում է տվյալ լեզվի իմաստարանական համակարգին: Փոխառյալ բառը փոխառող լեզվում, նոր միջավայրում կարող է ստանալ ազգային կոլորիտ, ձևեր բերել նոր իմաստներ, ռճական-կիրառական նոր առանձնահատկություններ:

Սովորաբար այս կամ այն հակացությունն արտահայտող բառի հետ լեզուն փոխ է առնում նրա հիմնական իմաստը, ավելի ճիշտ՝ այն իմաստը կամ իմաստային նրբերանգները, որոնք չկան փոխառող լեզվում: Այսպես՝ կոմունիստ, սոցիալիզմ, սոցիալիստ բառերը աշխարհի տասնյակ լեզուներին են անցել, փոխանցվել և այդ բոլոր լեզուների համար էլ կիրառվում են միևնույն իմաստներով, առանց նոր կամ լրացուցիչ իմաստների կամ իմաստային նրբերանգների ձեռքբերման:

Նման հատկանիշներով են օժտված տարբեր լեզուների համար ընդհանուր տերմինաբանական բառապաշարին վերաբերող բառերը:

Հաճախ փոխառյալ նույն բառի իմաստարանական համակարգը տարբեր լեզուներում կարող է խիստ տարբեր լինել: Որոշ դեպքերում տարբեր լեզուներում կարող են զուգահեռակալ միայն մեկ կամ երկու իմաստներ, իսկ որոշ դեպքերում փոխառյալ բառը առանձին լեզվում, նոր միջավայրում հանդես է գալիս սկզբնաղբյուր լեզվի համեմատությամբ բոլորովին այլ իմաստով կամ իմաստներով, երբեմն՝ իմաստի նրբերանգային որոշակի տարբերություններով: Այսպես՝ ուսերենում և գերմաներենում նույն՝ արիտուրիենտ (абитуриент, Abiturient) բառի ընդհանուր իմաստի հետ առաջացել են նաև տարբերություններ. ուսերենում абитуриент փոխառյալ բառի գործածական իմաստն է. «Թարձրագույն կամ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն ընդունվելու հավակնորդ, դիմորդ» հնացած իմաստով գործ է ածվում

⁸ SՃ՝ А. Б. Аникина и др. Современный русский язык, ч. I, М., 1976, էջ 24. Н. С. Валгина и др. Современный русский язык, М., 1966, էջ 28, 29, Р. Н. Попов и др. Ыզվ. աշխատ., էջ 90—92, Л. А. Булаховский, Введение в языкознание, ч. II, М., 1954, էջ 119, Ս. Ա. Ասլանյան, Տերմինաբանության աղբյուրները հայերենում (ժողով. Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության), Եր., 1982, էջ 216—230:

նակ «միջնակարգ դպրոցի շրջանավարտ», որպիսի իմաստով էլ այդ՝ Abiturient բառը գործածվում է գերմաներենում:

Այդ տեսակետից հետաքրքրական է ուսերեն փոխառյալ афера (<ֆրանս. affaire) բառի իմաստների համեմատությունը գերմ. նույն բառի հետ: Ռուսերենում նշված բառն ունի մեկ իմաստ՝ «Շահի համար կատարվող զանազան կարգի մեթոնալությունների վրա հիմնված գործողություն՝ գործարք, կասկածելի գործարք»: Այս իմաստով նույն աֆերա բառը հազվադեպ գործածություն ունի հայերենում, իբրև «շահախարդախություն» բառի համանշանակ: Գերմաներենում այդ բառի միայն մեկ իմաստն է զուգադիպում ուսերենում ընդունված, գործածական ներշնչված իմաստին: Ռուսերենից տարբեր են գերմաներենում գործածական հետևյալ իմաստները. Affäre—1. գործ, պատմություն, 2. սենսացիա առաջացնող իրադարձություն, 3. արկած, արկածախնդրություն, 4. դատական գործ, պրոցես, 5. վեճ, միջադեպ, 6. (հնց.) մենամարտ, մարտ, ընդհարում և այլն⁹:

Փոխառնող լեզվում, նոր միջավայրում փոխառյալ բառը երբեմն կարող է ձեռք բերել այնպիսի իմաստներ, որպիսիք չի ունեցել սկզբնաղբյուր լեզվում. օրինակ՝ միջ. լատ. spesa (արածացնելու համար վճարվող դրամ) <գերմ. Spesa (սնունդ, կերակուր) <չիս. spiže (անասնակեր, կեր, պարեն, մթերք) <լեհ. (գերմ.-ից) spesa (կեր, անասնակեր)¹⁰:

Որոշ բառեր կարող են տարբեր լեզուներում նախիմաստի զարգացման շնորհիվ իմաստային փոփոխությունների ենթարկվել և գործածվել տարբեր իմաստներով և իմաստային նրբերանգներով. այսպես՝ ուսերենում маляр բառը, որ փոխառություն է գերմաներենից՝ ունի «ենթկարար» իմաստը, միևնույն սկզբնաղբյուր լեզվում՝ գերմաներենում գործածվում է միայն «ենկարիչ, գեղանկարիչ» իմաստով: Ավանդյուրա բառը ուսերենում, ֆրանսերենում և սկզբնաղբյուր լեզվում՝ լատիներենում տարբեր իմաստներով են գործածվում. ուսերենում авантюра—«կասկածելի ձեռնարկում՝ գործ, քախտախնդրություն», ֆրանսերենում՝ aventure—«արկած, պատահար» (ի դեպ՝ ուսերենում այդ բառը փոխառություն է ֆրանսերենից), լատիներենում՝ aventura «պատահականություն»:

Բերված փաստերը վկայում են, որ հաճախ ժամանակակից զարգացած լեզուներում փոխառյալ բառը լեզվական նոր միջավայրում ենթարկվելով տվյալ լեզվի իմաստաբանական համակարգին՝ ձեռք է բերում նոր իմաստներ և իմաստային նրբերանգներ: Այդ նշանակում է նաև, որ փոխառյալ նույն բառի իմաստային յուրացումը (ինչպես և հնչյունական ու քերականական) տարբեր լեզուներում տարբեր օրինաչափությամբ է կատարվում:

Այսպիսով, փոխառյալ բառերը մուտք գործելով լեզվական նոր միջավայր, նոր լեզվի համակարգում դառնում է այդ լեզվի բառային կարգի միավոր և այնուհետև պասիվ դեր չեն կատարում: Անշատվելով մայրենի, հարազատ հողից, այդ կարգի բառերը նոր լեզվում սկսում են իրենց զարգացման նոր կենսագործունեությունը, ակտիվորեն մասնակցում են տվյալ լեզվի բառակազմությանը, հիմք դառնում բազմաթիվ նորակազմությունների, հաճախ ձեռք են բերում նոր իմաստներ, իմաստային նրբերանգներ, իսկ երբեմն այնքան են հեռանում սկզբնաղբյուրից, իրենց նախնական իմաստներից, որ նույնիսկ անճանաչելի են դառնում: Այդ դեպքում փոխառյալ բառի ֆերես միակ հիշողությունը կարող է լինել նրա միայն հնչյունական կազմը: Օրինակ՝ գալանտերեա (<ռուս. галантерея) բառը ծագել է галантныѣ ածականից (<ֆրանս. galant—«խիստ, շահագանց քաղաքավարի»), վերաիմաստավորվելով՝ ստացել է «արդուզարդղեն, արդ ու զարդի մանրուքներ» իմաստը¹¹:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում, այսպես կոչված, բառի «ներքին ձևը»: Փոխառության դեպքում բառի «ներքին ձևը» փոխառնող լեզվում նոր դրսևորում է ստանում: Հատկանշական է, որ փոխառյալ բառի ստուգաբանական իմաստը (բնիմաստը), ըստ բաղադրիչների մակարբերվող իմաստը և շատ հաճախ բառի կազմությունը փոխառնող լեզվում ընդհանրապես չի գիտակցվում: Այդ իսկ պատճառով էլ չի տարբերակվում նաև այդ բառի սկզբնաղբյուր լեզվում ունեցած «ներքին ձևը»: Այդ «ներքին ձևը» սկզբնաղբյուր լեզվում, ինչպես հայտնի է, հիմնականում որոշվում է տվյալ բառի բաղադրիչների շնորհիվ մեկնվող բառային ընդհանուր իմաստով: Մյուս կողմից, փոխառու լեզվում չի գիտակցվում նաև փոխառյալ բառի կազմությունը, բացառությամբ մի քանի հանրահայտ ածանցների (—խտ, —իզմ, —իա, —(ա)ցիա և այլն), և բոլոր դեպքերում նոր լեզվում յուրաքանչյուր փոխառյալ բառ ընդունվում է իբրև պարզ հիմք և ընկալվում՝ իբրև արմատական, պարզ բառ:

⁹ Հմմտ. К. Г. М. Готлиб. Немецко-русский словарь «ложных друзей переводчика», М., 1972:

¹⁰ Л. А. Булаховский, նշվ. աշխատ., էջ 117:

¹¹ Л. А. Булаховский, նշվ. աշխատ., էջ 117—118, Р. А. Будагов, նշվ. աշխատ., էջ 114:

Այսպես, հայերենում ուսերենի միջոցով փոխառյալ պոմֆոր բառը իտալերենում բաղադրություն է և կազմված է pomì-d-ogo բաղադրիչներից, բառացի՝ «ոսկե խնձոր»։ Նույն ձևով անգլերենի սնայպեր (<ռուս. снайпер) (<snipe—bekač բառացի նշանակում է «բեկասի հմուտ ուսուցիչ»։ կամ՝ ֆրանսերենում՝ կաշնե (<ռուս. кашне). cachne բառացի նշանակում է՝ «քիթի պահիր, քիթի քաղցր»։ Եթե սկզբնաղբյուր լեզուներում, տվյալ դեպքում իտալերենում՝ պոմֆոր, անգլերենում՝ սնայպեր, ֆրանսերենում՝ կաշնե բառերում ըստ բաղադրիչների ունեցած իմաստների այս կամ այն չափով հնարավոր է վերականգնել կամ մեկնել այդ բառերի «ներքին ձևը», ապա արդեն փոխառնող լեզուներում՝ տվյալ դեպքում հայերենում և ուսերենում դրանք գիտակցվելով իրրև պարզ, արմատական բառեր, նշված լեզուների բառակազմական և իմաստաբանական օրինաչափություններով որևէ ձևով հնարավոր չէ վերականգնել նրանց «ներքին ձևը»¹²։

Բառային փոխառությունների մեջ իրենց յուրացման աստիճանով տարբերակում են յուրացված և չյուրացված փոխառությունները¹³։

Փոխառյալ բառը յուրացված է համարվում, երբ այն քաղաքացիության իրավունք է ձեռք բերում, մտնում է մշտական գործածության մեջ, դառնում է նոր լեզվի բառային կազմի միավոր։ Օտար բառը այդ իրավունքը ստանում է միայն նոր լեզվում հնչյունական, ձևաբանական (քերականական) և իմաստային (իմաստաբանական) լիակատար յուրացման դեպքում։ Այս կարգի բառային փոխառությունները այնպես են մերվում, ձուլվում նոր լեզվի հետ, որ զովոր է տարբերել այդ լեզվի բառապաշարի մեջ մտնող մյուս բառերից, այսպես կոչված «նաբանակներից»։ Այդպիսին են, օրինակ, հայերենի հնագույն և հին փոխառությունները, կատարված՝ ուրարտերենից, խեթերենից, խուրտերենից, ինչպես և կովկասյան լեզուներից, նույնիսկ նոր և նորագույն փոխառությունները, կատարված՝ եվրոպական լեզուներից և ուսերենից։ Այսպիսով, հնչյունաբանորեն, քերականորեն և իմաստաբանորեն ամբողջապես յուրացված փոխառյալ բառերը մշտնում են նոր լեզվի բառապաշարը, կազմում բառային կազմի բաղադրատարրը։

Այս կարգի փոխառյալ բառերի հիմնական առանձնահատկությունն, ըստ երևույթին նրանց բառակազմական ակտիվությունն է լեզվական նոր միջավայրում, ինչպես օրինակ՝ ժամանակակից հայերենում ամբողջապես յուրացված փոխառյալ կոմունիստ բառի մասնակցությունը կոմունիստական, կոմունիստարար, կոմունիստորեն, հակակոմունիստական և այլն հայերեն նոր բառերի կազմությանը։ Այնուամենայնիվ, նշված բառակազմական ակտիվությունը միակ չափանիշը չի կարող համարվել։

Այս հարցում անշուշտ էական նշանակություն է ստանում փոխառյալ բառի կարեորությունը և դերը լեզվի բառապաշարային համակարգում։ Այդ տեսակետից ուշագրավ է նաև այն փաստը, որ կան նաև փոխառյալ բառեր, որոնք բառակազմական որևէ ակտիվություն կարող են չցուցաբերել, հանդես գալ մեկուսացած ձևով, բայց մուտք գործել նոր լեզվի բառապաշարային համակարգը, ինչպես՝ պեննիցիլին, ստրեպտոմիցին, ապպիլին և նման բառեր։

Փոխառությունը չյուրացված է համարվում, երբ փոխառյալ բառը հնչյունական, ձևաբանական (քերականական) և իմաստաբանական որևէ հատկանիշով չի համապատասխանում փոխառնող լեզվի նշված համակարգերին՝ նրա օրինաչափություններին և գործող կանոններին։ Այդ կարգի փոխառյալ բառերը նոր լեզվում ամբողջապես կամ մասնակի չյուրացված են համարվում կամ ըստ նշված լեզվական համակարգերի առանձին հատկանիշի, կամ բոլոր հատկանիշներով միասին։ Ըստ այդմ էլ տարբերակվում են հնչյունաբանորեն կամ քերականորեն, կամ իմաստաբանորեն մասամբ, կամ ամբողջապես յուրացված փոխառյալ բառեր։

Ա. Ա. Ռեֆորմատսկու տվյալներով ուսերենի քերականությանը անսովոր այնպիսի բառեր, ինչպես՝ кенгуру, пенснэ, колибри, чахохбили և այլն, որոնք իրենց վերջավորություններով չեն համապատասխանում ուսերեն գոյականների կաղապարներին, համարվում են քերականապես վերջնականապես դեռևս չյուրացված փոխառություններ։ Մյուս դեպքում, ուսերենում քերականորեն յուրացված այնպիսի օտար բառեր, ինչպես՝ Кельн, Тартарен և այլն, որոնք պարունակում են ուսերենին անսովոր հնչյունակապակցություններ, դասվում են ուսերենում հնչյունաբանորեն ոչ լրիվ յուրացված փոխառյալ բառերի շարքը¹⁴։

Մյուս կողմից, հնչյունաբանորեն և քերականորեն յուրացված փոխառյալ ոչ բոլոր բառերն

¹² Հմմտ. А. А. Реформатский, նշվ. աշխատ., էջ 115, Л. А. Булаховский, նշվ. աշխատ., էջ 108։

¹³ А. А. Реформатский, նշվ. աշխատ., էջ 104—106։

¹⁴ Նույն տեղում։

են մտնում նոր լեզվի հիմնական բառաֆոնդը: Դրանք նույնպես համարվում են ոչ լրիվ յուրացված փոխառություններ՝ արդեն բառային տեսակետից:

Այսպիսով, շյուրացված են համարվում բառային այն փոխառությունները, որոնք հնչյունական, քերականական, իմաստի կամ ոճական կիրառական տեսակետից առանձին հատկանիշներով և կամ բոլոր միասին առած ժամանակավորապես կամ ընդհանրապես խորթ են մնում նոր՝ փոխառող լեզվին, նշված առանձին հատկանիշներով կամ բոլոր հատկանիշներով ժամանակավորապես կամ ընդհանրապես նոր լեզվում մնում են շյուրացված: Այդ կարգի բառերը մասնագիտական գրականության մեջ հաճախ անվանվում են օտարազգի (օտարերկրյա) բառեր կամ օտարաբանություններ (ռուս. варваризм < հուն. barbarismos):

Դրանք փոխառյալ այն բառերն են, որոնք նոր լեզվում հնչյունական, քերականական և բառաիմաստային տեսակետից մնում են դեռևս շյուրացված և առժամանակ կամ ընդհանրապես չեն մտնում նրա ընդհանուր գործածական բառապաշարը, մեկուսացած և միայնակ մնալով՝ տվյալ լեզվի համակարգում դիտվում են իբրև օտար բառեր: Նոր լեզվում այդ կարգի բառերը տարբերվում են հաճախ իրենց կառուցվածքով և հնչյունական կազմով:

Օտարաբանությունների շարքն են դասվում նաև այն փոխառությունները, որոնց սեփական համազորները լեզվում լայն տարածում ստանալով՝ ձեռք են բերել արդեն քաղաքացիության իրավունք, ինչպես՝ գեոլոգ (երկրաբան), գեոլոգիա (երկրաբանություն), բիոլոգ (կենսաբան), բիոլոգիա (կենսաբանություն), ֆիլոլոգ (բանասեր), ֆիլոլոգիա (բանասիրություն) և այլն:

Օտարաբանությունների զգալի մասը վերաբերում է աշխարհի ժողովուրդների յուրահատուկ կյանքին, կենցաղին, ապրելաձևին, ազգային տոներին, սովորություններին, ծեսերին, երաժշտական գործիքներին, պարերին, այլևայլ պաշտոններին, կոչումներին, դիմելու ընդունված քաղաքավարության ձևերին, դրամական շափի միավորումներին, կառավարական և վարչական մարմիններին, հագուստներին, ուտելիքին, պատմական և մշակութային զանազան հասկացություններին և այլն. ինչպես, օրինակ՝ ֆրաու, ֆրեյլից, լորդ, լեդի, միլիոն, միսս, միսս, միստր, միլոնդ, սրբ, սբեյոդ, սիեյոսիեան, մաղամ, մաղմուազել, մեհուի, պարզան, բուպու, քրավիսմոս, ակր, դյույմ, յարգ, կաբելտով, ֆրանկ, պետ, զոլար, մարկ, պալամենտ, ստորտիեզ, սեյմ, սկիպեր, ֆենեզ, քյուրգեր, կոնգրեսմեն, պոլիսմեն, շերիֆ, պրեֆեկտ, մադեռա, խերես, վիսկի, բուրգո, սուլբերո, շինս, հալթեյ, կիմոն, խաոբի և այլն:

Օտարալեզվյան նշված կարգի բառերը, որոնք փոխառող լեզվում ունեն այդ լեզուն կրող ժողովրդի կյանքին ոչ հատուկ իմաստներ, բայց գործածվում են գրական լեզվի ինչպես գրավոր, այնպես էլ խոսակցական տարբերակներում, կոչվում են էկզոտիկ բառեր կամ էկզոտիզմներ: Մյուս կողմից, փոխառյալ այն բառերը, որոնք այլևայլ պատճառներով լեզվում լայն գործածություն չեն ստանում և չեն մտնում նրա հիմնական բառաֆոնդը, որպես պասիվ բառապաշարի բառեր՝ սկսվում են գործածվել ըստ անհրաժեշտության՝ զեզարվեստական գրականության և հրապարակախոսության մեջ, լեզվի գործառական տարբեր ոճերում:

Փոխառությունների տեսական հարցերի համար որոշակի հետաքրքրություն են ներկայացնում փոխառության ուղիներն ու հանգամանքները: Լեզվի մեջ փոխառյալ բառերը սովորաբար թափանցում են բանավոր և գրավոր ուղիներով:

Բանավոր ճանապարհով կատարվող փոխառությունները իբրև ժողովուրդների անմիջական շփման, խոսակցական հարաբերությունների անմիջական արդյունք, որպես կանոն, ավելի հեշտ են յուրացվում: Այդ կարգի բառային փոխառությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ, նախ, հաճախ ազավաղվում են, զգալի փոփոխման է ենթարկվում նրանց հնչյունական կազմը, առավելազույն շափով հարմարեցվում է նոր լեզվի (հատկապես նրա խոսակցական տարբերակի) հնչյունաբանությանը, երբեմն անճանաչելիորեն փոխելով իր հնչյունական պատյանը, երկրորդ՝ որոշ դեպքերում նրանք ենթարկվում են ժողովրդական ստուգաբանության և ազավաղված վիճակով անցնում բանավոր, խոսակցական լեզվին: Այս դեպքում փոխառող լեզվում մշակութային հասկացությունների հետ հիմնականում յուրացվում են առևտրին, նոր արհեստներին, կենցաղային առարկաներին, զանազան ապրանքների վերաբերող հասկացությունները: Այսպիսով, բանավոր փոխառությունները կատարվելով այլալեզու հանրության սովոր զանգվածների շփման, խոսակցական հարաբերությունների միջոցով՝ փոխառու լեզվից հիմնականում յուրացվում է խոսակցական բառապաշարը և փոխառյալ բառերը առավելազույն շափով համապատասխանեցվում են փոխառող լեզվի հնչյունաբանական, քերականական, իմաստաբանական համակարգերին: Այս կարգի բանավոր փոխառությունները հիմնականում տարածվում են ժողովրդախոսակցական լեզվում և բարբառներում և լրացնում բարբառային և խոսակցական բառապաշարը: Զի բացառվում նաև բանավոր փոխառությունների մուտքը գրական լեզվի համազործածական բառապաշարը: Ժամանակի ընթացքում այդ կարգի փոխառյալ բառերի որոշ

մասը մուտք է գործում գրական լեզվի բառային կազմը: Այդ տեսակետից հայերենի տասնյակ բարբառների թուրքերենից փոխառած մի քանի հազարի հասնող բառերը փաստորեն բանավոր փոխառություններ են:

Ռուսերենում բանավոր փոխառություններ են համարվում, այսպես կոչված, մոնղոլաբանություններն ու թյուրքարանովությունները: Ռուսագետների տվյալներով գերմանացի վարպետների միջոցով բանավոր ճանապարհով, և հաճախ աղավաղված ձևով, ռուսերենին են անցել ատաղձագործական այնպիսի բառեր, ինչպես, օրինակ՝ գերմ. Werkstatt > ռուս. верстак (հաստոց, դազգահ), Schraubzwinige > струбцинка, Handfil > на (д) пыльник, Schlöser > слесарь և այլն¹⁵: Ճրանսիական խոհարարներից ռուսերենին են անցել՝ рагу, желе, пломбир և այլ բառեր: Գերմաներենից, ֆրանսերենից, անգլերենից ռուսերենին են փոխանցվել կենցաղային ստարկաների, հագուստեղենի, կտորեղենի, արդուզարդեղենի բազմաթիվ անվանումներ, ինչպես օրինակ՝ шлафрон, лацкан, парик, пенюар, трико, корсет, корсаж, пудра, крем, парфюмерия, ридникюль, люстра, робер, раут, пикник, клуб, макинтош և այլն¹⁶:

Գրավոր կամ գրթային փոխառությունները կատարվում են գիտական և գեղարվեստական գրականության, պարբերական մամուլի միջոցով, հաճախ նաև պաշտոնական և գործարարական փաստաթղթերի շնորհիվ: Այդ եղանակով կատարվող փոխառությունները բնորոշ են նրանով, որ պատկանում են հիմնականում քաղաքակրթական հասկացություններին, մեծ մասամբ միտում են դառնալ «միջազգային բառեր», լայնորեն տարածվելով մի շարք լեզուներում¹⁷:

Գրավոր (գրթային) փոխառությունների մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ այդ կարգի փոխառյալ բառերը թե հնչյունական տեսքով (կազմով) և թե իմաստով ավելի մոտ են սկզբնաղբյուր կամ փոխառու լեզվին և առժամանակ փոխանոց, նոր լեզվում մնում են իբրև շտրբացված օտարաբանություններ: Մյուս կողմից, գեղարվեստական և գիտական գրականության միջոցով կամ այլ ուղիներով կատարվող գրավոր փոխառությունները ավելի «բարձր» են իրենց ոճական արժեքներով, հուզա-արտահայտչական գունավորմամբ, տարբերվում են բանավոր փոխառություններից բառագործածությամբ և բառապաշարի որոշակի շերտերին իրենց պատկանելությամբ: Այդ կարգի փոխառյալ բառերի հիմնական զանգվածը հասարակական-քաղաքական և գիտության ու տեխնիկայի այլևայլ քննազավառների պատկանող տերմիններ են, գրթային, երբեմն բանաստեղծական ոճերին պատկանող և լեզուների համագործածական բառապաշարի մեջ մտնող բառեր:

Նույն լեզվից միևնույն հասկացությունը նշանակող բառերի փոխառությունները կարող են կատարվել տարբեր ժամանակներում, տվյալ լեզվի զարգացման տարբեր փուլերում և, որպես օրինք, այդ կարգի բառերը ենթարկվում են հնչյունական տարբեր օրինաչափությունների: Այսպես, հայերենում՝ պողովատ և պողպատ բառերը տարբեր ժամանակների փոխառություն են պարսկերենից: Նույն ձևով, հայերեն՝ կեղև, կլեպ, կենպ բառերը արաբական փոխառություններ են, կեղև՝ գրական լեզվում, կլեպ և կենպ բառերը հայերենի բարբառներում:

Հունարեն staphylos «գալաք» բառը հայերենին անցել է ստեպլին, ստապլին և տապլին ձևերով: Երբեմն նույն լեզվից միևնույն բառի տարբեր ժամանակներում կատարված փոխառությունները հայերենում դառնում են հնչյունական-բառային կրկնակներ, հոմանիշներ և նույնիսկ պարզապես տարբեր բառեր:

Այսպես, պարսկերենից փոխառյալ՝ Արամազդ, Ռումիզդ և Հյուրմուզ անձնանունները հայերենում գիտակցվում են իբրև տարբեր բառեր, թեև սկզբնաղբյուր լեզվում նույնն են¹⁸: Նման փաստեր կարելի է բերել նաև այլ լեզուներից, երբ տարբեր ժամանակներում նույն լեզվից միևնույն բառի փոխառության դեպքում՝ նույն բառի պատմական տարբեր ձևերի փոխարեն, փաստորեն ստացվում է երկու բառ՝ տարբեր իմաստով և հնչյունական կազմով: Օրինակ՝ գերմանական լեզուներից Pund բառը ռուսերենը տարբեր ժամանակներում փոխ առնելով՝ կազմել է երկու տարբեր բառեր՝ пуд (փութ, 16 կգ) և фунт (ֆունտ, մոտ 400 գր)¹⁹:

Փոխառություններ կարող են կատարվել ինչպես նույն լեզվի մի բարբառից, այնպես էլ մի քանի բարբառներից: Մեկ բարբառից կատարված փոխառությունը սովորաբար մեկ ձև է ունենում: Մի քանի բարբառներից կատարված նույն բառի փոխառության դեպքում փոխառյալ բառերը մի քանի ձևերով են հանդես գալիս, որոնցից յուրաքանչյուրը տարածվում է փոխառու լեզ-

¹⁵ Հմմտ. А. А. Реформатский, նշվ. աշխատ., էջ 115:

¹⁶ Հմմտ. Л. А. Булаховский, նշվ. աշխատ., էջ 108—109, 114—116:

¹⁷ Л. А. Булаховский, նշվ. աշխատ., էջ 108, А. А. Реформатский, նշվ. աշխատ., էջ 115:

¹⁸ Հմմտ. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Ա մաս, Եր., 1940, էջ 236:

¹⁹ Ա. Սուխայան, Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1962, էջ 241—242:

վի տարրեր բարբառներում կամ միաժամանակ գրական լեզվում և բարբառներում. ինչպես, օրինակ՝ իրանական տարրեր բարբառներից փոխառնված հայերենում՝ մարծել, մարզել, մածել ևն. կամ իրանյան բարբառային ձևերից հայերենին անցած վիշապ և հուշապ բառերը և այլն²⁰:

Փոխառությունները կարող են լինել անմիջական կամ ուղղակի և միջնորդավորված կամ անուղղակի:

Անմիջական (ուղղակի) են համարվում այն փոխառությունները, որոնք տվյալ լեզուն իր պատմական զարգացման ընթացքում փոխ է առնում անմիջապես սկզբնաղբյուր լեզվից: Այդ կարգի փոխառությունները սկզբնաղբյուր լեզվի հետ անմիջական հաղորդակցման արդյունքն են: Այդ հաղորդակցումը կարող է լինել և՛ բանավոր, և՛ գրավոր ճանապարհով: Այսպես, հայերենի հին և միջին շրջանում իրանյան, ասորական, արաբական և հայերեն բարբառների թուրքական փոխառություններն անմիջապես են: Նոր շրջանում արդեն՝ դրուժինա, դրուժինիկ, ժուլիկ և այլ բառեր անմիջական (ուղղակի) փոխառություններ են ուսեցրեցից:

Միջնորդավորված (անուղղակի) են համարվում այն փոխառությունները, որոնք անմիջապես սկզբնաղբյուր լեզվից չեն կատարվում, այլ՝ մեկ այլ լեզվից, որում այդ բառը նույնպես փոխառություն է:

Այսպես, իդեալ, իդեալիստ բառերը հայերենը փոխ է առել ռուսերենից, ռուսերենը՝ ֆրանսերենից, ֆրանսերենը՝ հունարենից: Կամպանիա բառը հայերենին է անցել ռուսերենից, կատարելով իտալերեն, ֆրանսերեն շրջագիծ: Տևախ բառը հայերենին փոխանցվել է պորտուգալերեն, ֆրանսերեն, ռուսերեն ուղիով: Հայերեն կնիք բառը, աստորական փոխառություն է, հայերենից անցել է թուրքերենին, սրանից էլ ռուսերենին՝ книга ձևով²¹:

Որբան նույն բառի փոխառությունը կատարվում է երկու ուղիներով՝ անմիջական և միջնորդավորված: Օրինակ՝ ռուսերենը գերմաներեն Bürgermeister բառը փոխ է առել бургmeister, իսկ լեհերենից՝ бурмистр ձևով²²:

Լ. Ա. Բուլխովսկու²³ տվյալների համաձայն լեզվի պատմության ընթացքում հանդիպում են նաև ետադարձ փոխառություններ. այսպես՝ լեհերեն buda (փայտե տնակ, բուխ, խցիկ), լեհերեն boude, budka բառերը փոխառություն են գերմաներենից Bude, որ ունի «կրպակ, փայտաշեն մարագ, պահատնակ» իմաստները: Հետագայում գերմաներենի սիլեզյան բարբառները նույն բառը փոխ են առել լեհերենից կամ լեհերենից Bauda ձևով և ավելի նեղ իմաստով («լեռնային հյուղակ»):

Կան փաստեր, երբ փոխատու լեզուն սեփական բառը հնչյունական տեսքով և իմաստով անճանաչելիորեն փոփոխված ձևով ինքն է փոխառնում ուրիշ լեզուներից, ինչպես, օրինակ՝ ֆրանսերեն bogette (փողի քսակ) և fleurette (ծաղիկ, ծաղկիկ) բառերը անցել են անգլերենին budget (բյուջե) և flirt (ֆլիրտ, սիրախաղ) իմաստներով և նույն բառային ձևերով և իմաստներով կրկին վերադարձել են ֆրանսերենին:

Մեում է պարզել տարրեր ժամանակներում և հանգամանքներում լեզվում այս կամ այն փոխառության անհրաժեշտությունը:

Այդ առումով փոխառությունները լինում են անհրաժեշտ և ոչ անհրաժեշտ:

Անհրաժեշտ փոխառությունները կատարվում են հիմնականում տվյալ լեզվում այս կամ այն հասկացության բացակայության պատճառով, երբ մի լեզու փոխ է առնում այդ լեզվում բացակայող հասկացության համապատասխան բառը:

Անհրաժեշտ փոխառությունները տվյալ լեզվի պատմական զարգացման ընթացքում անխուսափելի են և հարստացնում են լեզվի բառային կազմը: Այդ կարգի անհրաժեշտ փոխառությունները համարվում են նաև մշակութային և ունեն ինչպես պատմական, այնպես էլ արդիական արժեք:

Հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում որոշակիորեն առանձնանում են, այսպես կոչված, մշակութային-պատմական փոխառությունները: Դրանք Հայոց լեզվի զարգացման տարրեր դրսևորումների՝ գարարի, միջին գրական հայերենի և աշխարհարարի՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուների տարրեր լեզուներից կատարած բառային փոխառություններն են:

Ըստ Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմություն» (Ա և Բ մասերի) տվյալների²⁴, էգեյան, թրակո-փոյուզիական, իրանյան, ասորական, կովկասյան, լատինական, հունական, արաբական

²⁰ Հմմտ. Հ. Աճառյան, նշվ. աշխատ., Բ մաս, Եր., 1951, էջ 423—424:

²¹ Л. А. Булаховский, նշվ. աշխատ., էջ 116:

²² А. А. Реформатский, նշվ. աշխատ., էջ 113—114:

²³ А. А. Реформатский, նույն տեղում, էջ 117:

²⁴ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Եր., Ա մաս, 1940, էջ 10—354; Բ մաս, 1951:

բառային փոխառութիւնների զգալի մասը մշակութային-պատմական անհրաժեշտ փոխառութիւններ են, որոնք վերաբերում են մարդկային կյանքի և կենցաղի բազմազան բնագավառներին: Այդ կարգի բառերից հիշատակութեան արժանի են՝ գինի, բուլ, յուղ (էգեյան կամ միջերկրական քաղաքակրթութիւնից), ազառակ, ալյուս, աստված, սայլ, սրիճ, փանդիոն (թրակո-փոյուզիական), բերդ, կնիք, բանի, ուրագ, ֆաղաֆ (ասորական), զուրան, խոփ, ոշխար, փարախ (կովկասյան), արեղա, սատանա, ֆանեան, ֆարոգ, փիլիսոփա, ծնծղա, կարսա, բարգման, հաշիվ (ասորական) և այլն: Հատկապես մեծ թիվ են կազմում իրանական, հունական, արաբական բառային փոխառութիւնները, որոնք վերաբերում են գիտական-գրական, մշակութային ու տնտեսական կյանքին, ինչպես և եկեղեցական-կրօնական բնույթի (հատկապես հունական փոխառութիւնները) և բուսական ու կենդանական աշխարհի (իրանյան և արաբական փոխառութիւններ) բառեր:

Անհրաժեշտ, անխուսափելի փոխառութիւններն էլ, վերջին հաշիվով, պատմական արժեք են ներկայացնում և ժամանակը իր ուղղումներն է մտցնում լեզվում այդ կարգի բառերի կենսագործունեութեան մեջ: Այսպես, մարդկային կյանքի և գործունեութեան համարյա բոլոր բնագավառներին վերաբերող հայերենում իրանյան մոտ 1400 փոխառութիւններից ժամանակակից հայերենի բառային կազմում հաստատապես մուտք են գործել մոտ 500, հունական 900 փոխառյալ բառերից՝ 130, արաբական 700-ից՝ մոտ 60 բառ: Նշված լեզուներից կատարված փոխառութիւնների վիճակագրական տվյալները միաժամանակ ցույց են տալիս, որ հայոց լեզվի զարգացման հետագա փուլերում այդ կարգի բառերից լեզվում ամրացել և բառապաշարում հաստատուն տեղ են գրավել միայն անհրաժեշտ այնպիսի փոխառութիւնները, ինչպես, օրինակ՝ բազմ, կաշաղակ, կապիկ, մոզես, հովազ, սամույր, սարյակ, սիւրամարգ, վագր, վիշապ, փիղ, արմավ, բրինձ, գազար, բաւր, հասմիկ, մանուշակ, վարդ, ազալիկ, նավթ, պղինձ, պողպատ, դեմք, հակաւտ, վարս, ախտ, բժիշկ, ազգ, տոմմ, աշակերտ, գուսան, դաստիարակ, նկար, պատկեր, քրմբուկ, կապույտ, կարմիր, հերմակ և այլն (իրանյան), ակադեմիա, ամբիոն, այլ, երգեհոն, քատրոն, կիթառ, հոստոռ, պոետ, ֆարսուղար, եկեղեցի, եպիսկոպոս, կաթողիկոս, ադամանդ, թուրք, մետաղ և այլն (հունական)²⁵:

Իրենց բնույթով անհրաժեշտ են նաև Սովետական Միութեան ժողովուրդների լեզուների՝ ռուսերենից կատարվող բառային նորագույն փոխառութիւնները: Սովետական իշխանութեան տարիներին սովետական ազգերի և ազգութիւնների միջև հաստատված սոցիալիստական շինարարութեան գործնական պահանջներից բխող նոր ձևի հարաբերութիւններն իրենց մեջ ներառում են ինչպես քաղաքական-տնտեսական, մշակութային, այնպես էլ լեզվի բնագավառները: Սովետական ժողովուրդները կամավոր կերպով ուսաց լեզուն ընտրելով իրեն ազգամիջյան հաղորդակցման կարևորագույն միջոց, սովետական իշխանութեան տարիներին, որպես կանոն, բառային փոխառութիւնները կատարում են բացառապես ռուսերենից և ռուսերենի միջոցով: Այդ տեսակետից ռուսերենը սովետական բոլոր ազգերի, ազգութիւնների և ժողովուրդների լեզուների համար փաստորեն դարձել է և՛ սկզբնաղբյուր, և՛ ուղեցույց լեզու: Մյուս կողմից, իր բնույթով պատմականորեն և սկզբունքորեն նոր ձև է ներկայացնում հասարակացման-տնտեսական նոր հարաբերութիւնների հիման վրա սովետական ազգային լեզուների փոխհարաբերութիւնը և հատկապես այդ լեզուների բառային կազմի փոխադարձ հարստացումն ու համալրումը նոր հասկացութիւններով և դրանց համապատասխան բառերով:

Սովետական ազգային լեզուների ռուսերենից կատարած փոխառութիւնները, ինչպես և առանձին լեզուների բառապաշարների փոխադարձ համալրումն ու հարստացումը կատարվում է իրավահավասարութեան սկզբունքով և իրեն համատեղ կյանքի և սոցիալ-քաղաքական և տնտեսական հարաբերութիւններից բխող անհրաժեշտութիւն՝ պրոգրեսիվ երևույթ է և կարևոր գործոն՝ ազգային լեզուների և հատկապես այդ լեզուների բառային կազմի բնական զարգացման և հարստացման գործում:

Սոցիալ-քաղաքական, մշակութային-պատմական նույն պայմաններում ապրող ժողովուրդների, ազգութիւնների և ազգերի միջև ստեղծված սոցիալիստական հարաբերութիւններով պայմանավորված հասարակական-քաղաքական, տնտեսական-արտադրական մշակութային և այլ կարգի անհրաժեշտ փոխառութիւններին հակադրվում են անհարկի փոխառութիւնները:

Ընդհանրապես անհարկի են համարվում բառային այն փոխառութիւնները, որոնց համադրները լեզվում կան և դրանց փոխառութեան պահանջը չի զգացվում: Այդ կարգի բառերը նշված նախորդ տիպի փոխառութիւններից տարբերվում են նրանով, որ՝ չլինելով տվյալ լեզվին անծանօթ հասկացութիւն՝ առարկայի կամ երևույթի անվանում, անցնելով լեզվին առանց որևէ

²⁵ Հմմտ. Ա. Մալխասյան, նշվ. աշխատ., էջ 253—258:

անհրաժեշտության, որևէ չափով չեն լրացնում նոր լեզվի բառային կազմը, սովյալ լեզվի համագործածական բառապաշարի բառերի հետ չեն մտնում բառաիմաստաբանական և ոճական-կիրառական զանազան կապերի մեջ: Նման փոխառությունները միատարր և միատիպ չեն կարող լինել: Այդ կարգի փոխառյալ բառերից առանձնանում են անհարկի այն փոխառությունները, որոնք գործածվում են լեզվում սեփական բառերի փոխարեն՝ լեզուն լավ շիմանալու պատճառով, կամ էլ սուկ իրրև «ձեռամուխություն»: Այդ կարգի անհարկի փոխառությունների դեմ պայքարելու հարցում պետք է ղեկավարվել Վ. Ի. Անիբեի «Ռուսաց լեզվի մաքրության մասին» հայտնի հոդվածի դրույթներով:

«Ռուսաց լեզուն մենք փշացնում ենք: Օտար բառը գործ ենք ածում առանց անհրաժեշտության: Այդ բառերը սխալ ենք գործածում: Ինչի՞ համար ասել «դեֆեկտներ», երբ կարելի է ասել թեորություններ կամ պակասություններ կամ բացել: Եթե կարողալ սովորողին ներելի է օտար բառեր գործածել իրրև նորություն, ապա զրականագետներին այդ ներել չի կարելի: Արդյոք ժամանակը չէ՞, որ մենք պատերազմ հայտարարենք օտար բառերի առանց անհրաժեշտության գործածությանը»²⁶:

Փոխառություն կարող է կատարվել հարկադրաբար, երբ մի ժողովուրդը գտնվում է մի ուրիշի երկարատև պետական, քաղաքական-վարչական տիրապետության և տնտեսական ազդեցության ներքո: Երկարատև ռազմա-քաղաքական տիրապետության ընթացքում տիրող ժողովուրդը տրվյալ դեպքում պարտադրում է նաև իր լեզուն, և առաջին հերթին՝ բառապաշարը:

Թուրքական դարավոր լծի արդյունք են հայերենի տասնյակ բարբառների թուրքերենից կատարած հազարավոր բառային փոխառությունները: Հ. Աճառյանի տվյալներով²⁷ միայն Պոլսի բարբառում հաշվվում են ավելի քան հինգ հազար թուրքական փոխառություններ: Համարյա նույն պատկերն է հայերենի մյուս բարբառներում:

Այդ կարգի փոխառությունների մեծ մասը ոչ միայն անհարկի է, այլև՝ ևսրկազրակահ: Այս դեպքում, ինչպես ցույց է տալիս որոշ լեզուների պատմությունը, լեզուն գտնում է օտար բանի ազդեցությունից պաշտպանվելու իր միջոցներն ու ուղիները: Այդ առումով հայտնի է շեխերենի օրինակը: Անցյալ դարի սկզբներին գերմաներենի տեական ազդեցությունից խուսափելու նպատակով և իրրև հակազդեցություն, շեխերենը ընդհանրապես սկսեց մերժել ամեն մի օտար բառի մուտքը լեզվի բառապաշարը²⁸:

Սկզբունքային է եղել նաև ժամանակակից հայ գրական լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակների դիրքորոշումը թուրքական անհարկի, հարկադրական փոխառությունների հարցում: Մասնագիտական գրականության տվյալներով հայերեն բարբառների թուրքական հազարավոր փոխառությունների դեմաց՝ ժամանակակից հայերենը իր բառապաշարն է համալրել այդ կարգի բառերի մի շնչին մասը միայն, ընդամենը մոտ 30 բառ:

К. А. СУКИАСЯН — Некоторые теоретические вопросы заимствований. — В статье исследуются такие общетеоретические вопросы лексических заимствований, как: внутренние и внешние (собственно языковые и внеязыковые) причины заимствования, фонетическое, графическое, грамматическое, семантико-лексическое освоение заимствованных слов, экзотизмы и варваризмы, письменное (книжное) и устное, прямое (непосредственное) и опосредованное, необходимое (культурно-историческое) и придаточное заимствование.

²⁶ Վ. Ի. Անիբե, Ռուսաց լեզվի մաքրության մասին, Երկեր, հ. 30, էջ 375:

²⁷ Հ. Աճառյան, Թուրքերեն փոխառյալ բառեր հայերենի մեջ, էմիլյան ազգագրական մոնոգրաֆի, հ. 9, Մոսկվա, Վաղարշապատ, 1902:

²⁸ Л. А. Булаховский, նշվ. աշխատ., էջ 107: